



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

39  
4821

# ՀԱՅՈՎԱՅՐ

ԽԵԼՕՔ ԵՒ ՌԵՍՈՒՄՆԱԿԱՐ

ՀՐԱՄԱՑՈՑ

85

C-45




80.  
L-45

ԲԵՐԵՑ

ԽԵԼՕՔ ԵՒ ԱԽՍՈՒՄՆԱՎԵՐ

3424 ՀԱՅԱՍՏ  
32597

ԵՐԵՒԱՆՑ



5310

85.

C-45<sup>a</sup>

# ԸՆԹԱՅ

ԽԵԼՈՔ ԵՒ ԱԽՍՈՒՄՆԵՐԻ

## ԵՐԵՒԱՆՑՈՅՑ

ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՔ

ՄՈՍԿՎԱ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍՏԱՅՈՂԱՑ

ԳԱՐԵՄԵԼԻ ՀԵԶՈՒՏԵԱՆՑ

ԵՒ

ԴԻՎՈՒԱՅԻ ԱԼԵԴԱԹԵԱՆՑ :

—○○—

## ՄՈՍԿՎԱ

Ի ՏՊՐԵՐՆԻ ԼԱՊԱՐԵՄՆԻ ՃԵՄԱՐԵՆԻ  
ԱՐԵՒԼԵՆԻ ՀԵՂԱԿԱՐ :

1860

Ի ՞ Ն Շ Ա ՞ Ն

ԵԶԴԱՄԻՐԱԿԵ ԵՒԾԵԳՈՅՆ

Պ. ԲԱՐՍԵՂԻ ԳԵՂՐԳԵԱՆ

Печатать позволяетъ, С.-Петербургъ,  
7 Сентября 1859 года.

Цензоръ В. Бекетовъ.

Ք Ե Թ Խ Ո Ւ Կ Ե Ա Ն Ց

ՏՓԽԱՄԵՑԻՈՑ

Հարդաճն ոք

Համարակալիք

Համարակալիք

ՅՈՒՆԻՎԵՐՏԻՏԵՏԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ

## ԿԱՐՑՐԱՅԻ

ԵԿ

## ԳՏԵԿՈ ԺԵՄԵՆԵԿ

Ղուկասի ծնողքը այնքան վա-  
ճառականութեան գործերի մէջ  
էին, որ ինքեանք հնարք չունէին  
նորան կրթութիւն տալու. բայց իւ-  
մացել էին որ այն կողմերքը մի ու-  
սումնարան կայ, որից դուրս էին  
եկել շատ պատուական երիտա-  
սարդներ, անուանի՝ թէ ուսումնով  
և թէ առաքինութեանց մէջ կըր-  
թութիւնով։ Թռէսլէտ այն ուսում-

նարանը համարեա՞ հարիւր մղոնի  
հեռաւորութեան վերայ էր, բայց  
Առկասի հայրը ուղարկեց նորան  
այնտեղև և շատ խնդրքով պահ տը-  
ւեց իւր որդին տեղւոյս վերատես-  
չին, որն որ իւր աշակերտներին  
նայելով, ինչպէս իւր սեպհական  
որդւոցը, բոլոր ջանքսը դրեց, որ  
նր վատ սովորութիւնները ուղղէ,  
աշխատանք սիրեցնել տայ և նորա  
հոգւոյ մէջ ազնիւ զգացմանց սեր-  
մեր ցանէ: Ընկերները տեսնելով  
վերատեսչի այս հոգսն ու ջանքսը,  
սկսեցին աշխատել վարդապետի  
միտքը դէպ ՚ի իւրեանց էլ դարձ-  
նելու:

Պէտք է ասել որ այսքան հոգ-  
սերը այն յառաջադիմութիւնը  
չունեցան, որն որ հարկաւոր էր  
սպասել: Առկասը անկանոն և ան-  
հանդարտ բնութիւն ունենալով՝  
շուտ մոռանումէր այն իմաստուն  
խրատները, որ նորան տալիս էին:  
Սովորելու ժամանակ այնպէս նա  
իւր ուշք ու միտքը ցրուած ունէր,  
որ ոչինչ մտադրութիւն չէր մը-  
նում գասերի համար: Բոլոր նորա  
պարտաւորութիւնները նուիրած  
էին զանազան յիմար խաղերին:  
Բաց ՚ի սորանից նա ոչինչ հոգս  
չունէր իւր կամ իւր գրքերի վե-  
րայ. նորա հագուստը որ տեսնէր:

իր այնպիսի կեղտոտութեան մէջ էր, որ չընայելովնորա գեղեցկութեանը, ամէնքը մտիկ աալիս աշկամայ զգւումէին։ Ահա այսպիսի վատ սովորութիւններով նա իւր ընկերներից շատ յետ մնաց։ Աշակերտներից չը կար ոչ մէկը, որ նորանից յետ մտած էլլինէր ուսումնարանը, փոքր էր գիտացել ու նորա կողքից անցնելու ժամանակ անարգանքով չէր նայել նորա վերայ։ Տարուայ վերջին, երբ քըննութիւնից առաջ դասերի քաղուածը կը լինէր, նա ոչ մի ժամանակ ուսուցչի աչքին չէր երևայ։ Իսկ մնացած օրերը կամ չէր գնայ

դասատուն, կամ դասատունը մըստած աշակերտների ետևից կը նստէր, որ վարժապետը չը հարցնէ։ Ես այսպիս շատ կը սիրէր վաղքնել, ուշ վերկենալ տեղիցը։ Այսպիսի լաւ լաւ սովորութիւններ շատ ունէր և այս իւր վարքով ոչ թէ միայն ատելի էր ուսուցիչների, այլ և ընկերների աչքին։ Եւ համարած էր, թէ նա արժանի չէ այն ուսումնարանի մէջ լինելու, որոյ անուանը իւր տգիտութեամբ և յիմարութեամբ միայն կեղտուամ էր։

Թռէպէտ այսպահ անարգանքներ էր կրում, բայց ոչինչ կերպով չէր

ուղղում, ամէն ժամանակ մի և  
նյոյ անմտութեամբ, խելացնորու-  
թեան և ամկոնոնութե մէջն էր:  
Վարժապետները նորան մտիկտա-  
լիս զգում էին մէկ ներքին խորհր-  
դաւորտիրութիւն և նորանց Պու-  
կասի համար ունեցած եռանգը օ-  
րէց օր կորչում էր, սառում էր:  
Պատահած ժամանակ մէկ մէկու-  
կաէին. խեղջ Պուկաս, ինչպի-  
սի տարաբաղդութեան մէջ պէտք  
է ընկնի, ինչ պէտք է ասեն հայրն  
ու մայրը, երբ կը տեսնեն իւրեանց  
որդին այսպիսի փոքր ուսումով և  
անշափ պակասութիւններով:

Այսպէս, երկու տարի անցաւ և

Պուկասը ոչինչ օգուտ չը քաղեց,  
երբ յանկարծ մէկ նամակ ստացաւ,  
ու մէրով, որի մէջ կարդաց հե-  
տեւալ խօսքերը.

Ի՞՞ սէրեկ առան:

«Դու էլ հայր չունես. — Առ-  
ատած մեզի նորանից բաժնեց և  
«Հեռացրեց: Ես կորցրի իմ ամու-  
սինս, որ իմ պահապան ու սիրե-  
ալի բարեկամն էր: Էլ աշխարհիս  
աերեսին, բաց ՚ի քեզանից, ոչ ոք  
աչունեմ, որ իմ տիսրութիւնս ու  
անեղութիւնս վարատէ, միայն դու

«ալէտք է լինես ինձ ուրախացնող։  
«Բայց՝ թէ որ դու էլ Աստուած  
ազգատէ, իմ ակնկալութիւնս՝ յոյ-  
սըս, չը կատարես, ուրիշ ոչինչ  
«չի մնալ ինձ, բայց ի յուսահա-  
ստութեան մէջ մեռանելը։ Այս  
նամակիս հետ ուղարկում եմ քո  
«հօր պատկերը. աղաջում եմ քե-  
զի, որ անկողինի գլխօրդ կախ ա-  
նես։ Ամեն ըստէ մտիկ տուր դո-  
ւրան և աշխատիր, որ դու էլ նո-  
ւրա նման առաքինի մարդ դառ-  
նաս։ Այս տարուայ կեմն էլ սցո-  
տուղ կը թողնեմ քեզ, որ կարո-  
ւղանաս բոլոր ուսումնէ աւարտէլ։  
«Մտածիր, որ իմ կեանքը քո ձե-

«ոին է, որ քո ողորմելի մայրը մի  
«ըստէ երջանիկ չի լինի առանց  
«քեզի։»


Թէպէտ Առկասը անմտադիր և  
խելացնոր էր, բայց դեռ այս պա-  
կասութիւնները չէին խեղդել նո-  
րա բնական ձիրքերը, — այս նամա-  
կը զարթեցրեց նորա քնած ողին։  
Գիրը կարդացածին պէս, աղի ար-  
տասուք թափեց, ձեռները կցեց  
ու ողորմելի ձայնով կանչեց. ախ,  
հայր իմ, հայր, դու ինձանից խլած  
ես յաւիտեան, էլ ոչ երբէք չը  
պէտք է արժանանամ. քո փաղաք-  
շանացը։ Յետոյ վեր առաւ ձեռին

այն պատկերը, համբուրեց, կպցրեց սրտին ու ասեց. ով իմ կեանքի առաջնորդ, դու այսքան ծախս արիր, այսքան չարչարանք կը եցիր իմ կը թութեանս համար, իսկ ես ոչինչ օդուտ չը քաղեցի: Դու այնպիսի քաջ, արի, առաքինի մարդ էիր, իսկ ես քո որ..., չէ ես արժանի չեմ քո որդի կոչվելու:

Այսպէս ախ ու վախ քաշելով բոլոր օրը անցոյց և գիշերը տեղը մտաւ որ քնի, բայց քունը աչքին չէր դալս: «Կորան թվում էր, թէ հայրը դլխօքը կանգնած՝ նախատելով՝ ասումէ. անպիսան ու անարժան որդի, ես իմ բոլոր կեան.

քըս անհանգստութեամբ անցուցի քեզ երջանկացնելու, իսկ դու իմ անունս էլ կեղտոտեցիր քովարքով:

Յետոյ մասձում էր մօր և նուրա նեղութեանց վերայ, որ պէտք է պատճառ էր իւր յետ դառնալովը, փոխանակ ուրախութեանը, որին խեղճ մայրը սոլասում էր: Աս, ինչ պէտք է անեմ, երբ մօրս աչքին կ'երևնամ, երբ իմ վարժապետներիս տիրայնող վկայութիւններս ցոյց կը տամ, երբ հասարակութեան մէջնա կը պարձենայ թէ որդւոյս լսու եմ սիրնել, ու ես՝ փոխանակ նորա խօս-



քերը հաստատելու, կ'ամացեցնեմ՝  
նորան ամէնու առաջև, երբ նա  
կը կամենաց սիրել ինձի և ես ո՛չ  
թէ սիրոյ՝ այլ ատելութեան ար-  
ժանի կը լինեմ։ Ախ Ազտուած,  
ախ սիրելի մայր, պէտք է քո մա-  
հի պատճառ դառնամ։ Ո՞հ, եթէ  
որ ես բոլոր պարտաւորութիւննե-  
րըս կատարել էի, վարժապետնե-  
րիս ասածներուն լսել էի և նո-  
րանց ցոյց տուած կերպով վար-  
վել էի։ Կամ եթէ ես կարենայի  
այժմ գո՞նէ յետ դարձնել այն ժա-  
մանակը, որ փախել է . . . ։ Ահա  
սյսպէս չարչարանքով բոլոր դի-  
շերը անցկացրեց։

Հենց որ լուսացաւ, վերկացաւ  
տեղից, հագաւ շորերը և գնաց  
վերատեսչին մօտ, ընկաւ նորա ոտ-  
քերը ու ասեց. ո՛վ տէր, դուք  
տեսնում էք, որ ես պէտք է ամե-  
նից տալարազդ տղայ լինեմ, ես  
ձեզ չը լսեցի, ինչ որ պէտք է  
սցման գիտենացի, չը հետեւ ցայ.  
Խղճացէք ինձի, ես չեմ ուզում  
որ մօրս մահի պատճառ դառնամ։  
Վերատեսչի գութը շարժվեց  
սյսանակնունելի գէպքից և սրաւա-  
շարժ խօսքերիցը։ Վերկացրեց  
Պուլսարին ու գրկեց նորան, ասեւ  
լով՝ սիրելի բարեկամն, որովհետեւ  
դու յանցանքդ ճանաչում ես, կաւ-

բող ես նորան ուղղէլ. երկու տարի անց ես կացրել անգործ, մնում է քեզ վեց ամիս. այս վեց ամսումը դու պէտք է բոլոր կորցրածդ յետ դարձնես. լաւ մոտածիր, տե՛ս թէ ի՞նչպէս պէտք է աշխատես: Բայց չը յուսահատվես. չը կոյ բան աշխարհիս վերայ, որ համբերութեամբ ու աշխատանքով կարելի չը լինի գլուխ հանել, սկսիր հէնց այս ըստպէիցս: Ամէն ժամանակ դու կարող ես մօտս դալ օգնութիւն ուղելու և յետոյ կը տեսնես թէ ի՞նչպէս քաղցր է աշխատանքի պառուզը, ու որքան դու այժմ անբաւական ես քեզանից, երկու

այնքան յետոյ կը լինես բաւականութեան ու հանդարտութեն մէջը: Դուկասը համբուրելով վերատեսչի ձեռները, բնկաւ նորա վզով վը ու փաթթվեց, Կայն ըստպէն նա վագեց խւը սենեակը, փակեց դռները ու նստեց դասերը պատրաստելու: Մի և նոյնը շարունակեց միւսօր, երրորդը և այսպէս խւը անկարծելի աշխատանքով բոլորին զարմացրեց: Ուսուցիչները սկսեցին նոր վերայ հոգս ունենալ. աշակերտները՝ որ առաջ անարդանքով էին նորան մոիկ տալիս, սկսեցին պատիւ տալ Այս պատիւը ու ուսուցչաց հոգ-

սը տեսնելով՝ Պռւկասն առաւել  
սկսեց աշխատել և առելի սիրով  
պարապիլ: «Կա՛ էլ սյն առաջուաց  
տղան չէր, որ իւր պարտաւորու-  
թիւնները թողնում, պարապիլ էր  
անցկացնում թանկադին ժամանա-  
կը. չէ՛, սցմը մեծ գժուարութք  
կէս ժամ հազիւ կարելի էր հեռաց-  
նել նորան ռւսումից: Ճշմարիտը  
տաած, երբեմն միտը կ'ընկնէր իւր  
առաջուաց կեանիքը և սիրով կը  
քաշէր դէպ ՚ի սյն կողմը, բայց  
իւր հօր պատկերին մտիկ անելից  
մէկէն ՚ի մէկ բոլորը կը մնուանար  
ու գրքին ձեռք կը տար:

Վեցերրորդ ամսի վերջը մօտիկ-

նում էր: «Եորան թվում էր թէ  
ժամանակը շատ շուտ է վազում  
և որովհետեւ նա համարեա մէկ  
ժամ պարապ չէր անցուցել,  
ոյս պատճառաւ նորա աչքի առա-  
ջեւ վեց ամիսը աննկատելի կեր-  
պով անցաւ:

Վերջապէս դնալու օրն էլ մօ-  
տիկցաւ: Իւր վեց ամսեայ կեան-  
քովը այնպէս գրաւել էր բոլորի  
սիրով, որ մոածելով թէ պէտք  
է բաժնվեն նորանից, աշակերտ-  
ները լալիս էին. իսկ վարժապետ-  
ները շատ և շատ ափսոսում Պռ-  
կասին, որ իւր ցոյց տուած աշխա-  
տանքովը, խոստանում էր նորանց

մեծ մեծ յոյսեր և կարծես թէ ա-  
սում էր նորանց. ձեր ոլողաբեր  
սերմերը ապառաժի վերաց չըն-  
կան : Վերասեսուն էլ, որ սիրել  
էր նորան ինչպէս սեպհական որդ-  
ւոյն, շատ տիրում էր նորա հե-  
ռանալովը և այս տիրութիւնը նա  
արտայսուց իւր նամակի մէջ,  
որն որ գրեց Դուկասի մօրը, աւե-  
տիս տալով նորա որդւոյ լու սո-  
վորելը և առաքինի լինելը : Ճա-  
նապարհին Դուկասի հոգին ազ-  
կութեան մէջ էր. անհամդիստ ու-  
անհամբերութեամբ յանկանում  
էր, որ շուտ տեսնէ հօրսկան տու-  
նը : Ել չէր վախում մօր աչքին

երևալցը, բայց ինք իրան տ-  
սում էր. ինչ յիմարութիւն արի,  
մի՛թէ ես չէի կարող մի և նոյնը  
անել երկու տարի առաջ. այժմ  
ինչքան յառաջաղիմութիւն կու-  
նենայի:

«Կորա դալիս մայրը դէմ եկաւ  
և որդւոյ հետ փաթթվեցաւ : Ի՞նչ  
ուրախութիւն էր մօր համար, երբ  
Դուկասը ցոյց տուեց իւր վկայա-  
կանները : «Յա մեծ մեծ յոյսեր էր  
երևակացում որդւոյ ապագայ կե-  
անքի մասին և Դուկասը նորա յոյ-  
սերից ո՛չ մինը չը ստեց : Ըստառ  
ընաանեկան կեանքի հանդամանք-  
ներին միտ դրեց, ոպակասութիւն-

ները լրացրուց ։ Իւր դործունեւու-  
թեամիր ու խմասուն վարմունքով  
ամբի սիրելի դառաւ և ամուս-  
նութիւնից յետոյ՝ իւր զաւակաց  
կրթութեան ետևից ընկաւ ու ա-  
հա սցաղէս նա դարձաւ բոլոր ըն-  
տանեաց երջանիկ հոյր։

(Գ. առաջին Ենէց)։

### ԿԵՌԱԾՈՒ)

ԲԵՐՅՆԻ<sup>2)</sup> մօտ եղած գիւղի մէջ,  
սցս վերջի Գերմանացւոց և Գաղ-  
ղիացւոց կուի ժամանակ, կենում-  
էր Երեմբերդ անունով գամատւո-  
րը։ Դիւղը լսյն ճանապարհից բա-  
ւական հեռու էր, մէկ փոս ընկած  
տեղումը։ Այսպիսի դրութիւնից  
ովհար է շնորհակալ լինեին գիւ-  
ղացիքը, որ սլատերազմի ահերը

<sup>1)</sup> Անոնի — ալուրալի։

<sup>2)</sup> Գաղղիացի և Գերմանիացի սահմանակից  
գիւղ։

չեին զգում։ Բայց Գաղղիացւոց  
զօքքը այստեղ էլ եկաւ վերջը,  
առաւ գիւղը և բնակութիւն շե-  
նեց։ Թաէպէտ շուտով Գերմանա-  
ցիք վրայ հասան և դուրս արին  
նորանց, բայց փոքր ինչ ժամանա-  
կից յետոյ ինքեանք էլ հարկադր-  
ված էին փախչելու։

Այսպէս, գիւղը երբեմն Գաղ-  
ղիացւոց և երբեմն Գերմանացւոց  
ձեռին էր լինում։ Բնակիչքը սո-  
րանով շատ էին նեղանում և ըր-  
դիտէին, թէ ինչո՞վ կը վերջանայ  
բանք։ Այս յարձակմանց մինի մէջ,  
Գաղղիացւոց զօքքը, սաստիկ յաղ-  
թը վելով, թէյնի ամիերի մօտով

սկսեց փախչել։ Գերմանացիք ըդ-  
հետ պնդեցին և առաւօտը վաղ,  
գիւղի մօտ, մեծ պատերազմ բաց-  
վեց։ Գնդակներն ու փառօդալից  
ոռումբերը հասնում էին մինչև ի  
գիւղը։ Մի քանիսը նորանցից իսկ  
գիւղի մէջ տրաքվեցան և խեղճ  
գիւղացւոց խրձիթները այրվեց։  
Երբ պատերազմը վերջացաւ ըս-  
լրովին, գատաւորը ձեռք տռեց  
հանդցնել հրդէհը։

Երեմբերդի կինը, դեղածած,  
նստած էր տան առջել և աղօթք  
էր անում։ «Կորա աղջիկ կարուի-  
նան, ինը տարեկան հասակով,  
մօր կշտին նստած լավս էր։ Կա-

բոլինան իւր օրումը չեր տեսել  
այնպիսի զարհուրելի տեսարան։

Դատաւորի տանը մօտիցաւ  
Գուսարի զինւորական<sup>1)</sup>։

— Փառք Ազտուծոյ, կանչեց  
մայրը։ Այս զինւորականը մերեւ  
ըլին է։

Աղջիկը նոյն բոպէ վեր կտցու  
և բացեց դռները։ Զինւորականը  
ձին կտպեց և դատաւորի կնոջը տ-  
սեց։

— Ազտուծոյ սիրոյ համար, ինձ  
բան տուեք ուտելու։ Ինչու եք  
այդպէս դեղնած։ Դառք, երկի,

Վախում էք։ Վատանգ էլ ոչինչ  
ըլ կաց, հըդէհը հանգցրած է ար-  
դէն։

Այս ասելով նա մտաւ սենեակը,  
նստեց տախտի վերսց և ճակատից  
քրտինք սրբելով, շարունակեց։

— Այսօր մեզ շատ մեծ զօռ  
հանդիպեցաւ, բայց մենք յաղթե-  
ցինք և յուսադիր ենք, որ Դաղ-  
վացիք հանգիստ կը թողնեն ոյս  
կողմը։

Այս համբաւը դատաւորի ըն-  
տանիքին շատ ուրախացրեց։ Մայ-  
րը վագեց մառնը զինի բերելու,  
որն որ աւաղի մէջ պահած ուներ։  
Կայսերէս բերեց հաց և ներուզ-

1) Օքուեր։

թիւն ուզեց, որ առաւել լսու չէ  
կարողանում մեծարել թանկագին  
հիւրին:

— Այս էլ բաւական է, պատաս-  
խանեց դուսարը, հացը կարելով,  
շատ շնորհակալ եմ ձեզանից:  
Ես այսօր դեռ բան չեմ կերել:

Այս ժամանակ փոքրիկ Կարոլի-  
նան խնդրեց մօրից մէկ աման, վա-  
զեց պարտէզը, քաղեց ոյնտեղ  
հստած կեռասներ և ուրախ դէմ-  
քով դրեց հիւրի առաջեւ:

— Այդ ի՞նչ է, կանչեց զինւու-  
րականը, դուք մօտ էք բերում ինձ  
կիռա՞ս: Հիմա սցս հաղուտդիւտ  
բան է, որովհետև պատերազմը

քար ու քանդ արեց բոլոր շրջա-  
կայ տեղերը:

— Այս կեռասը քաղած է ծա-  
ռից, որն որ աղջկաս ծննդեան օրը  
տնկել ենք, պատասխանեց դա-  
տաւորի կինը: Այս տարի առաջի  
անգամ պտուղ է տալիս մեզ, և  
մենք ուրախ ենք որ միջոց ունենք  
հայրենիք պաշտպանողին առա-  
ջարկելու:

— Ի հարկ է, մայրիկ, սռելաց-  
րեց Կարոլինան. Ես խմ կողմանէ  
ուրախութեամբ առաջարկում եմ  
պարոն զինւորականին:

— Դու շատ բարեսկրտ աղջիկ  
ես, ասեց դուսարը նորա ուշադ-

բութեամբը շարժած, բայց ես քո  
առաջարկութիւնը չեմ ընդունի:  
Ճաւատագուանհամբերութեամբ  
սպասում էիր, թէ երբ կը հասնի  
քո կեռասը ու հիմա դու ուրիշ  
մէկ անծանօթ մարդոյ ես տալի:  
Դուսարը, տեմնելով որ նպատա-  
կին չէ հասնում, շարունակեց.  
Եւ է կ'ընդունեմ, բայց գոնէ ինձ  
հետ միասին կեր:

— Զէ, չէ, պարոն, դուք անուշ  
արէք, ես ձեռը չեմ տսյ դորան:  
Զեղ համար էլ փոքր է այստեղ:  
Զինւորականն, այս բարի երե-  
խայի սիրտը չը կոտրելու համար,  
սկսեց ուտել, գովելով: Բայց յան-

կարծ հնչեցին պատերազմի հրա-  
վիրող փողը: Զինւորականը վեր-  
թուաւ, թուրը կապեց և սկսեց  
բարեկել դատաւորի ընտանիքին:  
Կարովինայի մայրը գինիածեց գու-  
սարի համար, իսկ աղջիկը՝ փաթ-  
թելով մնացած կեռասը թղթի  
մէջ՝ խնդրեց զինւորականին հետն  
առնելու: Դուսարը չը գիտէր ուր  
տեղաւորէ այն: Աերջը նա հանեց  
ետևի գրալանից արծաթեայ հաստ  
բումաժնիկը ու դրեց կուրծքի վե-  
րայ, կեռասը բումաժնիկի տեղը:  
Եւ դատաւորի կնոջը ձեռը մեկնե-  
լով ասեց.

— Շնորհակալ եմ ձեզանից ՚ի

բոլոր սրտէ այս քաղցր ընդունելութեան և հիւրընկալութեն համար։ Ես ոչինչ չեմ կարող ձեզ յիշատակ թողնել, բայց եթէ Աստուած կեանք տայ ինձ, կ'աշխատեմ գործով հաստատել իմ առձեզ շնորհակալութիւնս։

Խօսքը վերջացրեց թէ չէ, և ըստեց ձիու վերաց ու քշեց։

Գիւղացւոց ուրախութիւնը երկար ըլ տևեց։ Գաղղիացիք կրկին զօրութիւն ստանալով, յարձակվեցան այս գիւղի վերաց և բոլորը մոխիր դարձուցին։ Երեմբերգի ընտանիքը, հազիւ իւրեանց դլուխը կրակից աղատած, ման էր դա-

լի դոնէ դուռը օգնութիւն գտնելու։ Դատաւորը, իւր կնոջ ու աղջկայ հետ, աչքերը արտասուալի, թողեց իւր հայրենիքը և չուեց հեռու քաղաք։ Այստեղ նորանք շատ նեղութիւն կրեցին, որովհետեւ դատաւորին ոչ ոք չէր ճանաչում, իսկ նորա վկայաթղթերը բոլորը ացրվել էին։ Ճարը կտրած, Երեմբերգը սկսեց թղթեր արտադրել վարձով, իսկ նորա կինը աղջկայ հետ մողնի մագաղինի մշջկար անողի տեղ դտան։ Այս կերպով խեղճ ընտանիքը մի քանի ժամանակ կերակրվում էր։

Մէկ անգամ կոմուհի Բաշե-

նեն, այս քաղաքը գալով, հենց  
այն մազադինում, ուր Կարոլինան  
իւրմօր հետ կար էր անում, հրա-  
մայեց իւր համար շլեապկայ կարել:  
Երբ արդէն սպատրաստեցին, հրա-  
մայեցին Կարոլինային կոմուհւոյ  
մօտ տանելու այն:

Աղախինը ասեց նորան, թէ կոմ-  
ուհին նախաձաշիկ է անում և  
շուտով չէ կարել նորան տեսնել:

— Կարել է դուք երկար սպա-  
սէք, շարունակեց աղախինը, որով-  
հետեւ կոմուհին հիւրեր ունի.  
այսօր եկաւ նորա քոյրը իւր ամուս-  
նոյ և երկու աղջկանց հետ:

Այս ասելով աղախինը վեր ա-

ռաւ շլեապկան, և տարաւ իւր  
տիկնոջը ցոյց տալու: Քանի մի ժու-  
մանակից յետոյ նա վերադարձաւ  
և առաջնորդեց Կարոլինային պար-  
տէզը: Կոմուհին նատած էր հո-  
վանոցումը. քեռաջկանց հետ: Երբ  
Կարոլինային տեսաւ նա, կահչեց  
և ասեց, որ շատ հաւան է նորա  
բերածին. և իմանալով, որ այն նո-  
րա ձեռագործն է, շատ դովեց նո-  
րան: Այս միջոցումը երկու տղա-  
մարդ մօտեցան կոմուհուն, որոն-  
ցից մէկի կուրծքը զարդարում էր  
ին զանազան նշաններ, որ վկայում  
էին նորա պատերազմական յաղ-  
թութեանց մէջ քաջլինելը: Տես-

նելով Կարոլինային, նա աչքերը  
ցցեց ու յանկարծ կանչեց.

— Արդեօք դուք Երեմիերդ դա-  
տաւորի ազջիկը չէք: Ի՞նչպէս մե-  
ծացել էք, հազիւ ես ձեզ ծանա-  
չեցի: Մենք խօ հին ծանօթներ  
ենք:

Կարոլինան զարմացած չը գիտէր  
ինչ պատասխանել և հազիւ հա-  
մարձակվեց նայել կոմսուհւոյ հիւ-  
րի երեսին: Բայց նորա զարմանկը ը-  
աւելի մեծացաւ, երբ այս պարոնը  
բռնեց նորա ձեռիցը, տարաւ կնոջ  
մօտ ու ասեց.

— Ամալիա, ահա այն ազջիկը, որ  
տասը տարի առաջ ինձ մահից ա-  
ղատեց:

— Այդ ի՞նչպէս, պարոն, հարց-  
րեց Կարոլինան:

— Ահա ի՞նչպէս. միտելնիդ է  
այն գուսարի զինւորականը, որ ձեր  
տան մօտ, կռւի ժամանակ, եկաւ  
ձեզ մօտ ու հայ ուզեց. դուք ի՞նչ  
ուրախութեամբ տուիք ձեր կե-  
ռասները, որն որ առաջի անգամ  
քաղեցիք ձեր սեպհական ծառիցը  
և հարկադրեցիք, որ հետո վեր  
առնեմ:

— Տէր Աստուած, այս դուք էք:  
Չատ ուրախ եմ, որ ձեզ տեսնում  
եմ: Բայց ես չեմ իմանում, ի՞նչ  
պէս կարող էի ձեզի մահից ա-  
ղատել:

— Դուք, ՚ի հարկ է, չեք կարող  
դիտենալ, թէ ինչպիս պիտք ե-  
կան ձեզ տուած կեռասները, բայց  
ես երբէք չեմ մոռանայ: Այս իմ  
կեանքիս մէջ երևելի դէպքերից  
մէկն է:

— Կոյնալիս և ինչ համար, ա-  
ւելացրեց զինուրականի կինը,  
Կարոլինային վաթթվելով:

— Բայց ես էլ ոչինչ չը գիտեմ  
այս դէպքի մասին, ասեց կոմսու-  
հին բաշենեն: Պատմեցէք, մէկ...

— Ուրախութեամբ, ուրախու-  
թեամբ: ԱԵԿԸ մէկ անգամ Գաղ-  
ղացւոց հետ բաւական տաք պա-  
տերազմ ունէինք սորանց գիւղի

մօտ: Ես հոգնած ու քաղցած մօ-  
տեցայ դատաւորի տանը, որն որ  
սյս աղջկայ հայրն էր: Դատաւո-  
րի կինը մեծ ուրախութեամբ ըն-  
դունեց ու ճաշ տուեց, իսկ Կա-  
րոլինան մեծարեց ինձի խոր կեռա-  
սով, որն որ սորա ծննդեան օրն  
էր անկած և առաջի անգամն էր  
պտուղ տուել: Հազիւ տասը հա-  
տիկ կարացի ուտել, որ փողը հըն-  
չեցին: Ես նատայ ձիուս վերայ:  
Այստեղ Կարոլինան առաջարկեց  
ինձ մնացած կեռասը, թղթի մէջ  
վաթթած, և հարկադրեց ակա-  
մայ կամօք առնել հետս: Ես չը-  
գիտէի թէ ուր դնեմ այն ծրարը,

Հանեցի կողքի գրապանիցս հաստ  
երծաթեոյ բումաժնիկը ու դրի  
ծոցս, իսկ այն ծրարը գրապանս:  
**Ըուառվ** դարձայ դէալ ՚ի զօրքս,  
որ արդէն պատերազմում էր և  
տեղս բռնեցի: **Այս** ժամանակ էր  
որ ինձ գնդակդիպու: Եթէ կուրծ-  
քիս վերայ այն բումաժնիկը չունե-  
նայի՝ անպատճառ ինձ կը սպանէր  
այն գնդակը: **Աջանց** սորա թա-  
խանձանքի \*), ես չէի առնել այն  
սպուզները և, ուրեմն, բումաժ-  
նիկը գրապանումն կը մնար: — **Աչա,**  
ինչպէս այս աղջիկը ինձ մահից ա-  
ղատեց:

\*) Հաստանա.

Այս սպատմութիւնը ամէնի սիր-  
ուը շարժեց: Եւ զինւորականի կի-  
նը աղջկանց հետ ՚ի միասին գրկե-  
ցին Կարոլինային:

— **Ամէն** անգամ, երբ կեռոսս է,  
ինք ուտում, մենք միան էինք ըե-  
րում ձեզի, ասեց կրտսեր աղջիկը:

— **Մենք** շատ երջանիկ ենք, որ  
վերջապէս տեսնում ենք մեր հօր  
աղատողին, շարունակեց մեծը:  
Մենք կը ցանկայինք հաստատել  
ձեզի մեր առ ՚ի սրտէ շնորհակա-  
լութիւնը . . .

— Հա՛, որդի, ասեց զինւորակա-  
նը, աղջկայ խօսքը կտրելով, դուք  
ոլուտք է շնորհակալ լինէք Կարո-

լինայից։ Առանց սորան ես չեի կարող փայելել ձեզ հետ ուրախ ապրելը։ Յետոյ՝ դառնալով դէսլ ՚ի Կարոլինան։ Աֆից յետոյ ես ձեզի եմ պարտաւորեալ։ Բայց ասէք ինձ խնդրեմ, ինչու դուք այս քաղաքումն էք կենում, ինչու էք հեռացել այն տեղից, ուր ձեր ծնօղքըն էին ապրում։

Կարոլինան պատմեց զինւորականին, ինչ որ պատահել էր իւրեանց հետ։

— Դուք երկար չէք մնայ այժմեան դրութեան մէջ, կրկնեց զինւորականը։ Ես կաշխատեմ ձեր հօր համար լաւ տեղ ճարել։

Այս խօսքերի հետ նա գնաց կոմսի առանձնասենեակը և ասեց։  
— Սիրելի կոմս, ձեր կառաւարից մեռաւ, խնդրեմ որ այս ժամին տաս նորա տեղը Երեմբերգին։ Ես երաշխաւոր եմ։ Դուք կարող չէք Երեմբերգին նման ազնիւ և երախտագէտ կառաւարիչ դանել։

— Սիրելիդ իմ, ես այդպէս շուտով չեմ կարող վճռել այդ բանը, ասեց կոմսը։ Ես բոլորովին չեմ չանաչում Երեմբերգին, ինչ պէս այսպիսի երևելի գործը հաւատամ նորան։ Այսպիսի բաներով խաղալ չէ կարելի։

— Երեմբերգին դուք չէք ճա-

նաշում, բայց ես լսու կը ճանառ-  
չեմ։ Երբ պատերազմը դադարե-  
ցաւ, ես շուտ շուտ տեղեկանում  
էի նորա մասին և ամէն ժամանակ  
գովասանութիւն էի լսում։ «Առ-  
րան ճանաչողները խօսում էին  
նորա վերաց, ինչպէս մի վեհանձն  
և աղնիւ մարդոյ վերաց։ Ուրիշ էլ  
ինչ էք ուզում։

Այս եռանդուն խօսքերը համո-  
զեցին կոմսին։ «Սա էլ չէր ընդ-  
դիմանում։

Զինւորականը այն ժամանակ  
դուրս եկաւ Կարոլինայի մօտ և ա-  
սեց, թէ կը հոգայ նորա հօր դրու-  
թեան համար, ոչինչ չասելով

կոմսի հետ ունեցած խօսակցու-  
թեան մասին։

Կարոլինան դարձաւ տուն, ուր  
արդէն նորա ուշանալու վերացան-  
հանդիստ էին լինում։

Ի՞նչ պատահեց քեզի, հարց-  
րեց մայրը։ Ուր էիր մինչև հիմա։

Կարոլինան պատմեց զինւորա-  
կանի հետ պատահելը և նորա ար-  
ւած խօստմունքը կը ինեց։ Մինչև  
որ ծնողքը դոհութիւն էին տալի  
Աստուծոյ իւրեանց հիւրի անա-  
կընկալ աղատութեան համար,  
զինւորականը մօտաւ նորանց մօտ և  
դատաւորի ձեռները սեղմելով,  
շնորհաւորեց նորան, ասելով.

— Բարե՛ ձեզ, ոլ. կոմս Բաշե-  
նենի կառաւարիչ:

Երեմքերգը կարծեց, թէ զին-  
որականը սխալմամբ ասեց այս-  
բայց բարեսիրտ գուսարը մեկնեց  
բոլոր անցքը.

— Ես ձեզ համար տեղ ճարե-  
ցի. դուք կը լինէք կոմսի կալուա-  
ծոց վերաց կառաւարիչ և ես ու-  
րախ եմ, որ կարողանում եմ ծա-  
ռայել ինձ աղատողի հօրը: Յան-  
կանում եմ ձեզ այս նոր ծառա-  
յութեան մէջ բաղզաւորութիւն:  
Չը մոռանաք, որ այս տեղովը դուք  
պարտաւոր էք բարի գործոյն, որ  
ձեք աղջիկը ինձ արեց:

Յետոյ դարձաւ նա դէպ ի կա-  
րովինան և նորա մօրը ու շարու-  
նակեց.

— Այլ ձեզի՝ խնդրում եմ,  
թոյլ տաք ինձ ընծայել մի բան ի  
նշան անկեղծ հիւրընկալութեան,  
որ ինձ ցոյց տուիք: Այս ը հա-  
մարէք ինչպէս վճարմունք, բարի  
գործը ոչնչով չէ կարելի վճարել:

Այս ասելով նա երկուսին էլ  
տուեց մէկ մէկ քսակ, թանկագին  
ակներով լիքը:

Ուրախացած ընտանիքը զար-  
մանքից դեռ չեր դուրս եկել: Ու  
զինւորականն էլ բաւականութէ

մէջ էր, տեսնելով Երեմիերգի  
ընտանիքի ուրախութիւնը:

Հէնց միւս օր, Երեմիերգը  
մտաւ իւր նոր ծառայութիւնը և  
կենում էր այնուհետեւ խաղաղ  
ու հանդարտ: Կարովինան դառաւ  
կոմս Բաշենենի եղբօր աղջկանց  
ընկերակից և անդադար շնորհաւ  
կալութիւն էր անում Աստուծոյ,  
ծնողաց վատ դրութիւնը այսպէս  
երջանիկ փոխվելու համար:

(Ուսերէնէց):

## ԵՐԵՄԻ

Մի աղքատ մշակ, թերտրան ա-  
նունով, ունէր իւր ծերութեան  
ժամանակը վեց որդի, և շատ նե-  
ղութիւն էր կրում նորանց կերակ-  
րելիցը: Կատարաղզութիւնից էլ  
տարին անպտղաբեր էր և հացը  
շատ թանգ էր ծախվում: Թերտ-  
րանը աշխատում էր գիշեր ցե-  
րեկ քրտինք թափելով, այնու ա-  
մենայնիւ անհնարին էր նորա հա-  
մար այնքան փող վաստակելը, որ  
կարենար վատ հացով գոնեա կը շ-

տացնել իւր սոված որդիքներին։  
Կա յետին չքաւորութեան մէջ  
Եր։

Մէկ օր երեկոյեան, երբ դարձաւ իւր տուն, ողջօրուայ անընդհատ աշխատութիւնից հոգնած, կանչեց իւր փոքրիկ ընտանիքը և աչքերը արտասուբով լի ասեցնորանց. իմ սիրելի որդիք, հացը այնպէս թանգացել է, որ ես չեմ կարողանում ստանալ ձեզի պահպանելու համար բաւականը։ Այս այս կտորը, իմ բոլոր օրուայ աշխատութեանս արդիւնքն է. այս ասելով՝ հանեց կռնակի տակից հայ, մեծ զգուշութեամբ փախ-

թած թղթերի մէջ։ Պէտք է բաւականաք այս փոքրովը, սիրելի որդիք, շարունակեցալորը։ Ի հարկ է, այս բաւական չի լինի ձեզ կը շտացնելու, բայց գոնէ կազատէ ձեզի, որ ըստ մեռնէք սովից։

Խեղձ մարդը ըստ կարողացաւ էլ աւելի խօսել. բարձրացրեց աչքերը դէպ՚ի երկինքը և սկսեց լաց ըլել։ «Որա երեխայըը նմանապէս սկսան լալ և ամեն մէկը ինք իրան ասել. Աստուած իմ, օգնութիւն հասիր մեզ, խեղձերուս, օգնիր մեր հօրը ու մի՛ թողուր մեզ ամենիս քաղցածութիւնից մեռնել։

Բերտրանը հացը բաժանեց եօթը հաւասար մասը, որոնցից մինը պահեց իւր համար, իսկ միւսները տուեց որդիքներուն։ Մեծ որդին, որ բնութիւնից զգալի սըրտի տէր էր և բոլորից խելօք, չուզեց վեր առնել իւր մասը, ասելով՝ ես չեմ կարող ուտել, հայր, որովհեաւ տկարութիւն եմ ըզդում, ինդրեմ ուտէր իմ մասը դուք կամ բաժանէք եղքարցս ու քրոջներիս։

— Ի՞նչ է պատահել, սիրելի Ամանդ (այս էր մեծ որդւոյ անունը), ասեց նորան հոյրը, գրկելով։  
— Ես տկար եմ, պատասխանեց

Ամանդը, շատ տկար և ուզում եմ դնալ անկողին մտնել։

Բերտրանը տարաւ նորան անկողինը դրեց։

Միւս օր առաւօտը նա տիրած դնաց բժշկի մօտ և խնդրեց նորան իւր մօտ գալ, ի սէր Ացառեծոյ, տեսնել իւր հիւանդ որդին։

Բժիշկը, բարեգութ մարդ լինելով՝ շտապեց Բերտրանի տունը դնալու, թէպէտև գիտէր հաստատ, որ ոչինչ վարձ ստանալու չէ նորանից։

Նա մօտեցաւ Ամանդի անկողինին, տեսաւ նր բաղկերակլը\*), բացց  
\*) Պայման.

չըկարողացաւ ոչ մի հիւանդու-  
թեան նշան գտնել։ Միայն երե-  
խայի երեսին նկատեց սաստիկ նը-  
ւազութիւն և զօրացնելու համար  
նա ուզեց դեղ գրել։

— Մի գրեք ոչինչ, պարոն, ա-  
ռեց Ամանդը, ես դեղ չեմ ըն-  
դունի։

— Ինչու հարցըց բժիշկը զար-  
մանալով։

Առաջ. — Մի հարցնէք ինձի, պա-  
րոն, ես չեմ կարող այդ ասել ձեզ։

Բժան. — Ովկ է քեզ արգելում,  
սիրելի, ինչպէս տեսնում եմ դու-  
ինքնասած տղայ ես։

Առաջ. — Պարոն բժիշկ, այս

ինքնասածութիւն չէ ամենելին,  
ես ձեզ հաւատացնում եմ։

Բժան. — Ուրեմն բարե մնաս,  
ես չեմ կամենում ստիպել քեզ,  
բայց կը հարցնեմ հօրդ, որն որ  
քեզ պէս չի թագցնի։

Առաջ. — Ո՞չ, ՚ի զուր, պարոն,  
իմ հայրս էլ չէ իմանում այդ։

Դու շատ անհասկանալի երե-  
խայ ես, առեց բարկութեամբ բը-  
միշկը. այնու ամենայնիւ պէտք է  
մէկ հօրն էլ հարցնել, այս ասե-  
լովնա կամեցաւ դուրս գնալ։ Տէր  
Աստուած, պարոն, զգոյշ կայէք,  
այս բռալէիս կ'ասեմ ձեզ։ Բայց ա-  
ռաջ հրամացեցէք եղբարցս և

Քըռջներիս, որ հեռանան ինձանից: Բժիշկը հրամայեց երեխանց դուրս գնալ սենեակից և յետոյ, դառնալով դէպ ՚ի Ամանդը, լսեց նորանից հետեւեալ խօսքերը:

Ահ պարոն, այս մի քանի օրուայ մէջ իմ հայրս մեծ դժուարութիւն կարաց գնել հաց: «Նա մեզ բաժանեց այն, բայց ամենուն ընկաւ փոքրիկ կտոր, մինչև որ ինքն էլ չ'ուզեց իւր համար բան թողնել: Այս ինձի շատ թուելի եղաւ, տեսնելով իմ փոքրիկ եղբարցս և քըռջներիս սովի համբերութիւնը: Ես անդրանիկ եմ, ես նորանցից աւելի զօրութիւն ունեմ, այս պատ-

ձառաւ լսաւ համարեցի ես չ'ուտել, որ նորանք կարողանան բաժանել իմ մասը իւրեանց մէջ: Այս նպատակով ես սուտ հիւանդացայ և իրը թէ չեմ կարող ուտել, հրաժարվեցայ իմ մասից: Բայց իմ հայրը, պարոն բժիշկ, ոչինչ չը դիտէ այդ, հաւատացնում եմ ձեզի:

Բժիշկը, այս մանկահասակ երեխայի այսպիսի անձնազոհ խօսքերը լսելով, շատ զարմացաւ: Յետոյ դառնալով դէպ ՚ի նա, կարեկ ցութեամբ հարցրեց: բայց դու, սիրելի բարեկամ, չես քաղցած: — «Երեցէք ինձի, ես շատ

Քաղցածեմ, պատասխանեց Ամանդը, բայց այս ինձի այնքան վշտաւ լի չէ, ինչքան նորանց համբերութիւն տեսնելը:

— Բայց դու շուտ կը մեռնես, եթէ չես ուտել, ասեց բժիշկը:

— Ես այդ զգում եմ, պարոն, պատասխանեց լալով երեխան, միայն ես կը մեռնեմ յօժարութք, իմ հայրս կ'ունենայ գոնէ բերանը լի, և երբ ես կը լինեմ... ամենաբարի... Աստուծոյ առաջեւ, կը... ինդ... ըեմ նորան, որ կերակուր... տայ իմ փոքրիկ եղեարցս ու քուրերիս:

Առաքինի բժիշկը ըստ կարողա-

ցաւ իւր արտասովքն էլ բռնել, սյս ազնուամիտ երեխայի անձնաւ գոհութիւնը և հեկեկանքը տեսնելով. գրկեց նորան ու ասեց. չէ, իմ սիրելի, դու չես մեռնել: Աստուծած մեր ամենու հայրը կ'ունենայ քեզ և քո ընտանիքի վերաց ինամք: Ճնորհակալ կացիր նորանից, որ ինձ ացտեղ բերեց: Ես շուտ կրկին յետ կը դառնամ: Այս ասելով նա դուրս դնաց:

Երբ որ տուն գնաց, յանձնեց իւր ծառաներից մինին ամեն տեսակ պաշար և նորա հետ միասին դարձաւ Ամանդի մօտ: Հրամայեց դարսել ամենը սեղանի վերաց, և

հրաւիրելով ողջ ընտանիքը, թող  
տուեց նորանց ուտելայնքան, մին-  
չև որ կշտանան։ Շատ զուարձա-  
լի էր բարի բժշկի համար այսպի-  
սի բարի զաւակաց ուրախութեան  
տեսնելը։ Դուրս գնալու ժամա-  
նակ ասեց նա Ամանդին, որ չը նե-  
ղանայ, ինքը կը հոգայ նորանց  
պիտոյքի համար։ Եւ նա կատարեց  
ճշդիւ իւր խոստմունքը։ Ամէն օր  
ուղարկում էր առատապէս նո-  
րանց համար կերակուր։ Բաց ՚ի  
սյ նա պատմեց ուրիշ բարեգութ  
անձանց այս խեղճ ընտանիքի դը-  
րութիւնը, որոնք նոյնպէս հետե-  
ւեցին նորա բարերարութեան օ-

րինակին։ Մինը ուղարկում էր կե-  
րակուր, միւսը՝ փող, ուրիշները՝  
շոր, այնպէս որ, մի քանի օրիցյե-  
տոյ, փոքրիկ ընտանիքը ունէր բո-  
լոր պիտոյքը։

Մէկ օր Բերտրանը, նստած իւր  
որդիքների հետ, պատմում էր իւր  
կեանքի անցքերու վերայ մեծ բա-  
ւականութեամբ, երբ յանկարծ  
մտաւ բժիշկը և յայտնեց նորան,  
թէ իշխան Ալբերտը կամենում է  
Բերտրանի հետ խօսել։ Բերտ-  
րանը զարմանալով, թէ ի՞նչ դործ  
պէտք է ունենայ այս հարուստ մե-  
ծատունը, ըստ դիտէր, ի՞նչպէս գնաց  
նորա մօտ։ Բժիշկը նորան համո-  
5

զեց և իւր առաջնորդութեամբ  
տարաւ նորան Ալքերտի տունը։  
Իշխանը ասեց Բերտրանին. դուք  
մի առաքինի որդի ունէք, որի հա-  
մար ես էլ ցանկանում եմ լինել  
հայր, այս սպատճառաւ ես հրամա-  
յեցի որ ձեզ ամէն տարի թոշակ  
տան երեք հարիւր ոռութի։ Աման-  
դը և միւս ձեր երեխայրը կը սո-  
վորեն իմ ծախսով այն արուեստ-  
ները, որ նորանք կ'ընտրեն և եթէ  
տեսնեմ, օգուտ են քաղում, այն  
ժամանակ կը հոգամ նորանց յե-  
տագայ վիճակի վերայ էլ։

Բերտրանը, գառնալով իւր տուն,  
յայտնեց սցսուրախալի լուրը, գըր-

կելով բոլորին, չոքեց իւր ընտա-  
նիքի հետ և քաղցր արտասուօք  
օրհնեց նախախնամութիւնը։

(Պատմութեանից)։

## ԵԿՏԱԿԻ ՏԵՇՁ

Աղովի Վախովյլդն էր ամենայն  
կերպով կատարեալ մարդ . և այն  
նահանգում, ուր որ ընտանիքով  
ապրում էր, բաւական երեելի  
տեղունէր թագաւորական ծառա-  
յութեան մէջ: Երբոր արձակման  
թուղթը ստացաւ, նա գնաց յու-  
լիսի սկզբին տաք ջրերու վերայ և  
այնտեղ մօտիկ ամառանոց բռնեց:  
Կորա հետ միասին գնացին նորա  
կինը, աղջիկը ու երկու տղայք, ո-  
րոնց հասակը համառւմ էր տասնից  
մինչև տասն ու վեց տարին:

Տեղափոխութիւնից յետոյ ան-  
ցաւ մի քանի օր, երբ նա բոլոր  
ընտանիքով զբոսնում էր շոջակայ  
տեղերումը: Անտառին որ հասան,  
երեխայրը աղաչեցին հօրը, որ նո-  
րանց տանձ քաղելու թողնի: Պա-  
րոն Վախովյլդը ժամացոյցին նայե-  
լով՝ ասեց նորանց.

— Թռողնում եմ ձեզ, գնացէք քա-  
ղելու կէս ժամ, այն պայմանով մի-  
այն որ ափից չը հեռանաք թէ չէ  
ձեզ հետ փորձանիք կարող է պա-  
տահել:

Երեխայրը խոստացան չը հեռա-  
նալ ու գնացին անտառը: Կէս ժա-  
մից յետոյ դարձան նորանիք և ըն-

ծայեցին ծնողացը քաղած պառուղ  
ները:

Կստեցէք, ասեց հայրը և լսեցէք: Ամէն անդամ երբ տեսնում  
եմ կար ուտում եմ տանձ, մտիս  
մէկ շատ հետաքրքիր անցք է գալի,  
որն որ այժմ կամենում եմ ձեզի  
պատմել:

Երեխայրը նստան հօր չորս կողմը և մեծ ուշադրութեամբ պատրաստուեցան լսելու:

Երեսուն տարի առաջ, տմառը,  
տօն օրով, Բէյնի մօտ եղած  
փոքրիկ քաղաքի բնակիչքը դնում  
էին քաղաքից դուրս, քէֆ անելու: Եղանակը շատ լսուն էր: Ամէ-

նու երեսին երևում էր ուրախութիւն, ամէնքը բարեկամաբար մէկ  
մէկու ձեռն էին հուփ տալի, որով  
հետեւ պատերազմը նոր վերջացել  
էր և թշնամեաց գունդը քաղաքից հեռացել էր:

«Մինչև որ բոլորքը ուրախանում էին, մի խեղճ երեխաց, տաս  
սը տարեկան, նստած էր մի մեծ  
տան շէմքի մօտ և անց ու դարձ  
անողին հրաւիրում էր, կանչելով.  
տանձ առէք, տանձ առէք, լաւ լաւ  
տանձեր:»

«Բայց ոչ ոք ուշադրութիւն չէր  
դարձնում դէալ ի նա: Հագուստն  
էր մավի վարտիկ, ծակծկած կոշեկ-

ներ և գուսարի բանկոնակ։ Հնացած գդակը աչքին էր եկել, որովհետև նորա համար շատ մեծ էր։

«Արդէն կէս օր դառաւ ու երեխայն նստած էլի գովում էր իւր տանձերը ու առնող չէր ճարում։ Եյս նորան շատ ցաւեցրեց ու նալաց էլաւ։ Չը նայելով որ խեղճը առաւօտից ոչինչ չէր կերել ու սովը սաստիկ տանջումէր, նա չէր համարձակվում ողորմութիւն ուղել։

«Տէր Աստուած, կանչեց վերջը յուսահատութեամբ, խղճա իմ հօրս։ Ես այսօր նորան խոստացաց հաց ու գինի առնել, ու այս մըտ-

քով քաղեցի տանձ։ Ախ, Աստուած, դու խղճա այն խեղճ ծերին։

«Այս խօսքերը տան տիրոջ ականջին հասան, որն որ պատուհանի մօտ կանգնած էր։ Բարեսիրտ մարդը ցած եկաւ և ասեց փոքրիկ գուսարին։

«Տուր ինձ այդ տանձը, ահա քեզ փող. գնա հօրդ համար հաց ու գինի առ և նորան խնդրէ, որ ինձ համար աղօթք անէ։ Բարով մնաս, սիրելի։

«Տղան տուեց տանձերը այն բարեսիրտ մարդուն, որն որ տասնապատիկ վճարեց, քան թէ արժէր։ Յետոյ՝ վագեց շուտով, հաց ա-

ուաւ, քանի մի ձուաներ և մէկ շիշ  
գինի, ու գնաց դէպ ՚ի անտառը,  
ուր նորա հայրն էր կենում:

Այս տեղ ալ Վինդովլը խօսըը  
կտրեց ու արտասուբը սրբեց: Եւ-  
րեւում էր, որ նորա սիրտը խռո-  
վութեան մէջ է: Յետոյ շարու-  
նակեց.

«Փոքրիկ գուսարը դարձաւ հօր  
մօտ: Կերկայացը էր ձեզի, սիրելի  
որդիք, վիրաւորուած զինւոր, կի-  
սաքանդուած խրճիթումը, պատո-  
տած անկողինի մէջ: Բաց ՚ի ժան-  
դուած հրացանը, թուրը և փայ-  
տէ ոտք, խրճիթի մէջ ուրիշ կա-  
րստիք չը կար: Մէկ անկիւնումը

շիշով ջուր էր դրած և նորա մօտ  
դանակն ու չորցած հացի կմորնե-  
րը, որ առաջի գիշերուայ ընթրի-  
քից մնացել էին:

«Վիրաւորուածը շատ էր նե-  
ղանում որդւոյ ուշանալու վերայ,  
մտածելով թէ՝ արդեօք մի բան ըլ-  
լինի պատահած նորա հետ: Այս  
զինւորը մէկ ժամանակ քաջ զօ-  
րականներից մէկն էր. բայց յետոյ,  
մի ոտք կորցնելով, մնացել էր  
փոքրիկ ոռձիկի յոյսով, որով կա-  
մայ ակամայ պէտք է բաւականա-  
նար: Դժբաղդութեամբ այս վեր-  
ջի ապրուստն էլ կորաւ նորա հա-  
մար, երբ թշնամիքը յափշտակե-

ցին թագաւորական գանձարանը։  
Չը գիտելով թէ ի՞նչ անէ, նա  
առժամանակ տեղաւորվեց մեր ա-  
սած խրճիթումը և սկսեց պարա-  
պել աւելներ շինելով, որն որ որ-  
դին ծախում էր։ Ճերը թէպէտ  
հազիւ կերակրվում էր, այնու ա-  
մենայնիւ բաւական էր իւր վեճա-  
կով, յօյս ունելով, որ Աստուած  
նորան օգնութիւն կը համի։ Բայց  
այժմ, արդէն տասը օր էր, որ նա  
տեղիցը չէր կարողանում շար-  
ժիւ, որովհետեւ առաջուայ վերըը  
բացուել էր (նորոգուել էր)։  
«Ճիւանդը երկար ժամանակ սպա-  
պասում էր երեխային, բայց նա

չէր դալիս։ Աղօթելով որդւոյ հա-  
մար, վերջապէս նա քուն մտաւ։  
«Մի քանի ժամանակից փոքրիկ  
դուսարը ուրախութեամբ վազեց  
խրճիթը, և երբ տեսաւ իւր հօրը  
քնած, մէկ կողմը քաշուեց և մեծ  
զգուշութիւ առած բաները դրեց  
գեանին։ Չ'անցաւ մի քառորդ  
ժամ, ճերը զարթեց և ասեց։

«—Աս, դժւ ես, ինչու այսքան  
ուշացար։ Ես կարծում էի թէ մէկ  
փորձանք է պատահել քեզ հետ։

«—Ճայրիկ, կանչեց երեխայն,  
Աստուած մեզի ողորմեց այսօր։  
Մէկ բարի մարդ իմ քաղած տան-  
ձերը գնեց և տասն անգամ աւե-

լի վճարեց, քան թէ արժելու Ես  
սպիտակ հաց առայ, մեկ շեշ գինի  
ու հինգ ձու. փող էլ մնաց ինձի:

«—Ճշմարիտ որ Ապտուած ողոր-  
մել է մեզ, գոհանանք Կորանից:  
Ես շատ ախորժակով կուտեմ  
սպիտակ հաց ու կը խմեմ գինի:  
Չը գիտես այն բարերար մարդը  
ով է, որն որ քեզ փող տուեց:

«—ԱՀա նա. այս ասելով մոտա-  
մի մարդ, որ մինչև այն ժամանակ  
նկատում էր գրան ետեից:

«Երեխայն դեռ կերծես թէ վա-  
խեցաւ, բայց միտք բերելով այն  
բարերարի երեսը, ճանաչեց նո-  
րան ու, Ճշմարիտ, սա նա է, ասե-

լով՝ ընկաւ նորա ձեռները պաշ-  
չղեց:

«Բարեւ ձեզ, ասեց անծանօթը:  
Ես էի սորան փող տուողը: Լսե-  
լով սորա տրտունջը, որդիական  
սիրով շարժվեցայ . . . : Բայց ես  
ցանկացայ ինքս վերահասու լինել,  
թէ արդեօք սորա հայրը այնքան  
աղքատ է: Գնացի սորա ետեից  
մինչեւ իսկ խրճիթը, կանգնեցայ  
այստեղ և տեսայ այն աղքատու-  
թիւնը, որուն չէի սպասում: Ես  
շատ ուրախացայ, որ այստեղ եկայ:  
Այսօր դուք վերջին անգամ կը  
գիշերէք այստեղ, վաղը ես կու-  
ղարկեմ կառքս և կը տանել տամ

ձեզի ինձ մօտ : Աստուած կամեցել  
է ինձ հարստութիւն տալ : Իմ  
կարծիքով՝ ամէնից լաւէ աւելորդ  
մասը տալ զինւորին, որն որ ա-  
րիւն է թափել հայրենեաց հա-  
մար և այսպիսի առաքինի երեխա-  
յին, ինչպէս ձեր որդին է : Ու-  
րեմն, վաղը տասը ժամին կառքը  
ձեր ետևից կը գայ:

«Ճիւանդն ու նորա որդին կար-  
ծում էին թէ այս բոլորը երա-  
զումն են տեսնում :

«—Միթէ Աստուած կամեցաւ  
ինձի ողորմալ, ո փառք քեզ Աստ-  
ուած, փառք ձեզ : Մենք երբէք  
քո ողորմութիւնը դէպ ՚ի չարը

չենք գործածել : Յետոյ՝ գառնաւ-  
լով դէպ ՚ի անձանօթը՝ շարունա-  
կեց . առաջուց շնորհակալ ենք  
ձեզանից այն ամէն բարելութեց  
համար, որ դուք միտք ունեք մեզ  
անելու : Թա՞ղ Աստուած ձեզ վար-  
ձատրէ մինը տասնապատիկ այնոր  
համար, ինչ որ դուք կը տաք խեղ-  
ձերին, որոնք չեն դադարիլ ձեզ  
համար աղօթք անելից :

«Անձանօթը շարժվեց հիւանդի  
խօսքերովը և փոքր ինչ խօսելից  
յետ, զնաց :

«Միւս օրը նշանակած ժամին ե-  
կաւ կառքը ձերի և նորա որդւոյ  
համար «Նորանց շատ լաւ ընդու-

նեցին բարերարի տանը և առանձին սենեակը տարան։ Տանտէրը հրամայեց բժիշկ կանչել հիւանդի վէրքը առողջացնելու և նորապյա քաղցը հոգացողութիւնը լացըցնում էր ծերին։ Կոյնպէս և փոքրիկ գուսարին չէին մոռանում. նորա շորերը փոխեցին և սկսան ուսում տալ։ Երեխայն ցոյց էր տալիս ընդունակութի, իսկ տանտէրը օրէ օր իւր ուշադրութիւնը աւելացնում էր, որ կրթէ նորան ինչպէս սեպհական որդւոյն։

«Ախ, քանի՛ անգամ հայրն ու որդին շնորհակալու սրտիւ պաշում էին. իւրեանց բարերարի

ձեռները։ Անցաւ կէս տարի, ինչոր ծերն ու երեխայն երջանիկ էին. բայց նորանց բաղզաւորութիւնը երկար չը տևեց, որովհետև՝ զինուրը հիւանդացաւ դողցով, և այնով էլ մեռաւ. Մահից առաջ նա կանչեց իւր որդին և տաեց։

«— Տեսնում ես, սիրելի որդի, իմկեանքը շուտովկը հանդչի։ Ես արդէն ծեր եմ և վաղուց հետէ հիւանդ, նշանակում է, ես պէտք է շնորհակալութիւն անեմ Աստուծոյ, որ նեղութիւններից ազատում է ինձ։ Ես հանդարտ կը մեռնէի, եթէ քո տալուգոյն լինէր

ապահոված։ Ի՞նչ պէտք է անես  
սիրելի որդի, — դու մէնակ ես ու  
ոչինչ էլ չունես։ Տեսնում ես,  
քո դրութիւնը շատ վատ է։ բայց  
եթէ դու խկութեամբ կատարես  
Աստուծոյ բոլոր պատուիրանքնե-  
րը, քեզ Կա կօգնէ։ Ուրեմն խոս-  
տացիր ինձի, որ չես թերվելու  
Աստուծոյ պատուիրանքներից և  
կը հեռանաս մեղքերից։ Եթէ Կա  
քեզ փորձանքներ ուղարկէ, համ-  
բերութեամբ դիմացիր։ Խսկեթէ  
ողորմած լինի քեզ վերայ, շնոր-  
հակալ կաց Կորանից և տուած  
բարիքը դէպ'ի չարը ըլ գործա-  
ծես։ Ուրեմն՝ — սիրելի որդի, քո

բաղդաւորութիւնը քեզանից է  
կախած և յոյս ունեմ, որ քո հօր  
խնդիրքը խոնարհութեամբ կը կա-  
տարես։

«Երեխան հեկեկաց ու հօր ձեռ-  
ները պաշպէց։ Կա հոգեարին  
խոստացաւ երբէք ըլ մոռանալ  
տուած խորհուրդները և միշտ լի-  
նել Ճշմարիտ քրիստոնեայ։

«Այս ժամանակ դուռը բացվեց  
և նորանց բարերարը ներս մտաւ։  
Ճերը կրկին շնորհակալութիւն  
արեց նորան և մի քանի խօսքով  
յայտնեց, որ նեղանում է որդւոյ  
ապագայի մասին։

«— Առաջ համար մի նեղանաք,

կլինեց տանտէրը, ևս ամէն ժամանակ կը հոգամ։ Այրան կը տամ կատարեալ կրթութիւն, որ կարողանայ կառավարել իմ գործերս, որոնք ընդ նմին նորանը կը լինեն, եթէ կը գրաւէ իմ հաւատարմութիւնս։

«Փոքրիկ գուսարը ընկաւ բարերարի առաջը ծնկան վերայ ու խոստացաւ սիրել նորան և պաշտել ինչպէս հօրը։ Բարերարը գրկեց երեխային և իւր խոստմունքը կը կնեց։ Այս սրտաշարժ տեսարանի վերայ ծերի աչքերը արտասուքով լցվեց և ուրախութեամբ կանչեց, թէ՝ հիմա հանդարտ եմ

մեռնում։ Եւ Ճշմարիտ, մի քանի ժամից յետոյ՝ նա փչեց հոգին։  
